Հավելված N 2
2026 թվականի փետրվարի 5-ին կնքված
1032-11002/2026-ԱՀՆՏ14 պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 2

## 1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ» |
| Դրամաշնորհի N | Լոտ 14. Լոռի 3 |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2026-31.12.2026թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.04.2026 -30.06.2026թթ. |
| Ներկայացման օր | 03.07.2026թ. |
| Հաշվետվության պատասխանատու<br><br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Սիրանուշ Սողոմոնյան<br><br>Թիմ լիդեր |

Digitally signed by
MKHITARYAN
YERVAND
2508730335
Date: 2026.08.06
10:33:07 AMT

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են
- սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության տրամադրում,
- կենցաղային սպասարկում և խնամք,
- բժշկական օգնության կազմակերպում:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- **Սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության** տրամադրման շրջանակներում սոցիալական աշխատողի կողմից իրականացված տնայցերի միջոցով աջակցություն է տրամադրվել 25 շահառուի Լոռու Ալավերդի համայնքում: Սոցիալական աշխատողի կողմից իրականացվել է կարիքի գնահատում և վերագնահատում, որի արդյունքում իրականացվել է 6 ուղղորդում:
 Խորհրդատվական աջակցության շրջանակներում շահառուներին շարունակական տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների վերաբերյալ, անհրաժեշտության դեպքում իրականացվել է շահերի պաշտպանություն:
- Ազատ ժամանցի կազմակերպման շրջանակներում կազմակերպվել է թվով 3 մշակութային միջոցառում, որին մասնակցել է տնային խնամքի թվով 4 շահառու: Իրականացված միջոցառումներն են՝ Սուրբ Զատիկ, Կանանց միամսյակին նվիրված տոնակատարություն, «Երգում են մեծերը» խորագրով երաժշտական ցերեկույթ:
- **Կենցաղային սպասարկման և խնամքի ծառայության տրամադրման** շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է տրամադրվել 25 շահառուի: Յուրաքանչյուրին իր գնահատված կարիքից և ինքնասպասարկման կարողությունից ելնելով աջակցություն է տրամադրվել բնակարանի մաքրության և անձնական հիգիենայի պահպանման հարցում, գնումների, կոմունալ վարձավճարների իրականացման, սննդի կազմակերպման, բարեգործական ճաշարանից կերակրի տուն բերման, անհրաժեշտության դեպքում՝ կերակրման հարցում: Անհրաժեշտության դեպքում իրականացվել է ուղեկցում՝ գնումների, զբոսանքի կամ շահառուի կարիքի բավարարման նպատակով համապատասխանաբար այլ վայր:
- **Բժշկական օգնության տրամադրման** շրջանակներում տունայց է իրականացվել 25 շահառուի՝ ուղղված շահառուների առողջական վիճակի վերահսկմանը, տանը առկա դեղորայքի պիտանելիության ժամկետի ստուգմանը: Հաշվետու ժամանակահատվածում անվճար դեղորայքի իրավունք և տեղաշարժման սահմանափակում ունեցող թվով 5 շահառուի համար պետական պատվերի շրջանակներում տարբեր պոլիկլինիկաներից և բժշկական կենտրոններից ձեռք է բերվել անվճար դեղորայք: Թվով 2 շահառուի համար կատարվել է գլյուկոմետրիա, 1 շահառուի համար տեղամասային պոլիկլինիկայից վերցվել է բժշկական քարտից քաղվածք, 2 շահառուի համար իրականացվել է ուղեկցում բժշկական հաստատություն:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել են հետևյալ նյութերը.

- Սուրբ Զատիկ (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://surl.li/kracik),
- «Երգում են մեծերը» միջոցառում (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://surl.li/ffwbrz)։

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը։**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչընդոտող խնդիրներ չեն առաջացել։

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը)։**
***Հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված են հետևյալ գործողությունները.***

- սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության տրամադրում,
- կենցաղային սպասարկում և խնամք,
- բժշկական օգնության կազմակերպում։

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար։**

- Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի պատասխանատուն եւ սոցիալական աշխատողը մասնակցել են Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնում տեղի ունեցած աջակցող ցանցի տարածաշրջանային ֆորումին, որի հիմնական նպատակն է տարածքային մակարդակում սոցիալական համագործակցության ակտիվացումը, սոցիալական դեպքի վարման շրջանակներում ռեսուրսների ներգրավման և օգտագործման, ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման արդյունավետության բարձրացումը։
- Սոցիալական աշխատողները մասնակցել են «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ կենտրոնական գրասենյակի կողմից կազմակերպված «Շահառուի աջակցության փաստաթղթավորում» թեմայով հանդիպմանը, որի ընթացքում քննարկվել են ձևաթղթերի ու հարցաթերթերի կիրառելիությունը և այդ մասով անհրաժեշտ հմտությունները։

Ձևաչափ

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության տնային պայմաններում խնամքի մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 25/25 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 20 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 1 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | - |
| 1.2.2 | 18-40 տարեկան | - |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 1 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 24 |
| 2. | Ըստ գնահատված կարիքի՝ դասակարգված խմբերում ընդգրկված շահառուների թվաքանակը (Ա/Բ). *նշել յուրաքանչյուր խմբում ընդգրկվածների թիվը* | Ա –2<br>Բ - 23 |
| 3. | կենցաղային սպասարկում. | 25 |
| 4. | բժշկական օգնություն և սպասարկում. | 25 |
| 5. | սոցիալ-հոգեբանական օգնություն | 25 |
| 5.1 | այդ թվում՝ մշակութային բնույթի ծառայությունների և միջոցառումների կազմակերպում | 4 |
| 6. | խորհրդատվական օգնություն | 6 |
| 7. | այլ ծառայություն (*նշել*) | |

Կազմակերպության ղեկավար *Երվանդ Մխիթարյան* «03» 07. 2026թ

(ստորագրություն, անուն,ազգանուն)